ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-19/7» ծածկագրով հայտարարված գնանշման հարցման գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստ

ք. Երևան 25 հուլիսի 2019թ. ժամը 11:00

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահող՝ Շ. Հարությունյան

Գնահատող հանձնաժողովի անդամներ՝ Թ. Զաքարյան

Ա. Սերոբյան, Ա. Մխիթարյան

Գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Լ.Բաղդասարյան

Գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստից հարգելի պատճառով բացակայում է հանձնաժողովի նախագահ Հ. Արչունցը, նիստը նախագահում է Շ. Հարությունյանը:

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Գնանշման հարցման գնման ընթացակարգի հայտեր ներկայացրած մասնակիցների մասին:
3. Հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին:
4. Յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին:
5. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին:
6. Առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին:
7. Հայտերի վերաբերյալ հարցումների և պարզաբանումների մասին
8. Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին:

Քվեարկությամբ ընդունվել է՝ կողմ 5, դեմ 0:

2. Գնանշման հարցման գնման ընթացակարգի հայտեր ներկայացրած մասնակիցների մասին:

2.1 Սահմանված ժամկետում գնանշման հարցման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

N	Մասնակցի անվանումը	Էլ. փոստի հասցե
1	«Յունիքոմփ» ՍՊԸ	info@unicomp.am
2	«ՊՌՈ Ինվեսթ» ՍՊԸ	proinvestone@gmail.com
3	«Սեգ» ՍՊԸ	Seg_tender@mail.ru
4	ООО «Акреколь»	aagrecole@yahoo.com
5	Էդմոնդ Ասատրյան Վիրաբի Ա/Ձ	Monch_76@inbox.ru

3.Հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին:

3.1 Հրավերի պահանջներին համապատասխան հայտեր (որոնց Armeps համակարգը դիտել է որպես ներկայացված (պիտանի) հայտեր), կազմել և ներկայացրել են հետևյալ մասնակիցները՝ «Յունիքոմփ» ՍՊԸ, «ՊՌՈ Ինվեսթ» ՍՊԸ, «Սեգ» ՍՊԸ, ООО «Акреколь», Էդմոնդ Ասատրյան Վիրաբի Ա/Ձ:

4.Յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին:

4.1 «Յունիքոմփ» ՍՊԸ, «ՊՌՈ Ինվեսթ» ՍՊԸ, «Սեգ» ՍՊԸ մասնակիցները կազմել և ներկայացրել են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան փաստաթղթեր:

4.2 ООО «Акреколь» և Էդմոնդ Ասատրյան Վիրաբի Ա/Ձ մասնակիցները ներկայացրել են հրավերով սահմանված պայմաններին անհամապատասխան փաստաթղթեր, մասնավորապես, ООО «Акреколь» մասնակցի հայտի Դիմում-հայտարարության մեջ չափաբաժինների համարը սխալ է գրված և 3)-րդ կետի

2-րդ ենթակետում անհրաժեշտ է լրացնել մասնակցի անվանումը, իսկ Էդմոնդ Ասատրյան Վիրաբի Ա/Ձ մասնակցի հայտում առկա չէ լիազորագիր:

4.3 Գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջները, մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի գնահատման նիստը և հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացրել է մասնակիցներին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

4.4 ООО «Акреколь» և Էդմոնդ Ասատրյան Վիրաբի Ա/Ձ մասնակիցները մինչև կասեցման ժամկետի ավարտը չեն շտկել հայտում առկա անհամապատասխանությունը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետի պահանջները, գնահատող հանձնաժողովը ООО «Акреколь» և Էդմոնդ Ասատրյան Վիրաբի Ա/Ձ մասնակիցների հայտերը գնահատում է անբավարար և մերժում է:

5.Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին:

5.1 Գնման առարկա է հանդիսանում ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի կարիքների համար Համակարգչի կոշտ սկավառակների ձեռքբերումը, որը խմբավորված է 2 չափաբաժիններում:

5.2 Պայմանագիրը կատարելու համար հրավերով սահմանված պահանջներին համապատասխան գնահատված մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

	Մասնակցի անվանում	Գինն առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր	Քանակ
1	**Համակարգչի կոշտ սկավառակ 300 Գբ**				5 հատ
	«ՊՌՈ Ինվեսթ» ՍՊԸ	570000	0	570000	
	«Յունիքոմփ» ՍՊԸ	665000	133000	798000	
	«Սեգ» ՍՊԸ	890000	0	890000	
2	**Համակարգչի կոշտ սկավառակ 2 Տբ**				5 հատ
	«Յունիքոմփ» ՍՊԸ	812500	162500	975000	
	«ՊՌՈ Ինվեսթ» ՍՊԸ	960000	0	960000	
	«Սեգ» ՍՊԸ	990000	0	990000	

Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում է՝ առանց ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման՝ համաձայն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի:

6.Առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին:

6.1 Քանի որ գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ուստի առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով, համաձայն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջների, հանձնաժողովի նիստը կասեցվել է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին («Յունիքոմփ» ՍՊԸ, «ՊՌՈ Ինվեսթ» ՍՊԸ, «Սեգ» ՍՊԸ) էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցել է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին՝ հուլիսի 25, ժամը 11:00, ք. Երևան, Կ. Ուլնեցի 68 հասցե:

6.2 Գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների նիստին բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից միայն «ՊՌՈ Ինվեսթ» ՍՊԸ-ն է ապահովել իր կազմակերպության պատշաճ ներկայությունը (կից ներկայացվում է նոր նվազեցված գնային առաջարկը): Գնահատող հանձնաժողովը մյուս մասնակիցների («Յունիքոմփ» ՍՊԸ, «Սեգ» ՍՊԸ) կողմից ներկայացված գնային առաջարկները ընդունում է անփոփոխ:

«ՊՌՈ Ինվեսթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նոր գնային առաջարկ.

Հ/հ		Գինն առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր
2	**Համակարգչի կոշտ սկավառակ 2 Տբ**			
	«ՊՌՈ Ինվեսթ» ՍՊԸ	810 000	0	810 000

6.3 N 1 և 2 չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ՊՌՈ Ինվեսթ» ՍՊԸ մասնակցին՝ որպես բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից նախապատվություն տալու սկզբունքով:

6.4 N 1 և 2 չափաբաժինների մասով երկրորդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Յունիքոմփ» ՍՊԸ մասնակցին:

6.5 Էլեկտրոնային եղանակով ՀՀ ՊԵԿ հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «ՊՌՈ Ինվեսթ» ՍՊԸ, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

6.6 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության պահանջները՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից ուղարկել ծանուցում առաջին տեղ զբաղեցրած մասնակցին, որպեսզի վերջինս հրավերով սահմանված կարգով և ժամկետում գնահատող հանձնաժողովին ներկայացնի իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիրը՝ համաձայն հրավերով նախատեսված հավելված N 3 և հավելված N 3.1-ի:

7. Հայտերի վերաբերյալ հարցումների և պարզաբանումների մասին:

7.1 Հայտերի վերաբերյալ հարցումներ և պարզաբանումներ չեն եղել:

8. Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

8.1 Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիրը և ՀՀ ՊԵԿ-ից Տեղեկատվության ստացման հաջորդող աշխատանքային օրը:

Քվեարկությամբ ընդունվել է՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահող՝ _____ Շ. Հարությունյան

Գնահատող հանձնաժողովի անդամներ՝ _____ Թ. Զաքարյան

_____ Ա. Սերոբյան

_____ Ա. Մխիթարյան

Գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ _____ Լ.Բաղդասարյան

Հավելված 2
«ՆՄՈՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-19/7» ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ԳՆԱՑԻՆ ԱՌԱՋԱՐԿ

Ուսումնասիրելով «ՆՄՈՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-19/7» ծածկագրով գնանշման հարցման հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, «ՊՌՈ Ինվեստ» ՍՊԸ -ն առաջարկում է
մասնակցի անվանումը

պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

ՀՀ դրամ

Չափա-բաժինների համարները	Ապրանքի անվանումը	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1	Համակարգչի կոշտ սկավառակ 300 Գբ	570000 (հինգ հարյուր յոթանասուն հազար)		570000 (հինգ հարյուր յոթանասուն հազար)
2	Համակարգչի կոշտ սկավառակ 2 Տբ	810000 (ութ հարյուր տաս հազար)		810000 (ութ հարյուր տաս հազար)

«ՊՌՈ Ինվեստ» ՍՊԸ-ի տնօրեն Զավեն Եղիազարյան _____
Մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը)

Կ. Տ.

** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*
***եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա փվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:*

Digitally signed by YEGHIAZARYAN ZAVEN 2202900969
Date: 2019.07.25 12:32:13 AMST